ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հունվարի 7-ից մինչև ապրիլի 7-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իմ աշխատանքային գործունեությունն ուղղված է եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, սոցիալական ներառման քաղաքականության արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև ոլորտում իրականացվող բարեփոխումների առաջխաղացմանը: Աշխատանքները իրականացվել են նախարարության ռազմավարական առաջնահերթություններին և բաժնի գործառույթներին համապատասխան՝ ներառելով ինչպես ընթացիկ վարչարարական գործընթացներ, այնպես էլ համակարգային նշանակության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներ:

Իրականացվել են քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրման և դրանց արձագանքման աշխատանքներ, վերլուծվել են անհատական դեպքեր և տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, արտոնությունների և պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ: Միաժամանակ կազմվել են պատասխան գրություններ ինչպես

քաղաքացիների և կազմակերպությունների դիմումներին, այնպես էլ պետական տարբեր մարմիններից ստացված գրություններին՝ ապահովելով ոլորտին առնչվող հարցերի պատշաճ և ժամանակին արձագանքումը:

Բաժնի պետի հանձնարարությամբ պատրաստվել են գրություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր, ինչպես նաև մշակվել են առաջարկություններ և եզրակացություններ՝ բաժնի գործառույթներից և խնդիրներից բխող հարցերի վերաբերյալ: Աշխատանքների շրջանակում ապահովվել է նաև ներքին հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից ֆինանսավորվող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման գործընթացին: Ուսումնասիրվել են դրամաշնորհային մրցույթում հաղթած կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունները, իրականացվել է նրանց կողմից մատուցվող սոցիալ-վերականգնողական ծառայությունների վերլուծություն, կազմվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Միաժամանակ մասնակցել եմ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված ռազմավարական ծրագրերի, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին: Մասնավորապես իրականացվել են վերլուծություններ, վեր են հանվել առկա խնդիրները և առաջարկվել են դրանց լուծմանն ուղղված մոտեցումներ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել եմ նաև ապաինստիտուցիոնալացմանն ուղղված աշխատանքներին, մասնավորապես համայնքային ծառայությունների զարգացման գործընթացներին: Այդ համատեքստում ներգրավված եմ եղել ՀՀ Արմավիրի մարզում հաշմանդամություն

ունեցող անձանց համար նախատեսվող անկախ կյանքի կենտրոնի ձևավորման աշխատանքներում՝ մասնակցելով կառավարման մոդելի, ծառայությունների փաթեթի, շահառուների ընտրության և սպասարկման մեխանիզմների, ինչպես նաև ներքին ընթացակարգերի մշակմանը:

Իրականացվել է ակտիվ համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ: Կազմակերպվել և անցկացվել են հանդիպումներ և քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են ոլորտում իրականացվող բարեփոխումները, առկա խնդիրները և զարգացման հնարավորությունները: Միջազգային գործընկերների համար պատրաստվել և տրամադրվել են համապատասխան տեղեկատվական և վերլուծական նյութեր:

07.04.2026թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան